ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը ստանալու նպատակով հունիսի 13-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին իր անդրանիկ այցը կատարեց Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նորընտիր նախագահ Կարեն Դեմիրճյանը՝ փոխնախագահներ Ալբերտ Բազեյանի եւ Ռուբեն Միրոյանի ուղեկցությամբ:

Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը եւ բարեմաղթանքը տալով Ազգային Ժողովի նորընտիր ղեկավարներին՝ հույս եւ համոզում հայտնեց, որ նոր Ազգային Ժողովը կշարունակի իր օրինաստեղծ գործը հայրենի երկրի ամրապնդման համար: Վեհափառ Հայրապետը նորընտիր նախագահի ուշադրությունը հրավիրելով երիտասարդ սերնդի հոգեւոր-բարոյական դաստիարակության եւ կրթության գործում եկեղեցու դերին, կարեւորեց եկեղեցի - պետություն կապերի առավել սերտացումը՝ հետագա նոր օրենքների ամրագրմամբ:

Պրն. Դեմիրճյանը Վեհափառ Հայրապետին վստահեցրեց, որ, ստանձնելով Ազգային Ժողովի նախագահի պաստասխանատու պաշտոնը, կաշխատի ամեն ինչ անել հօգուտ ընդհանուր ազգային շահի:

Հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին, հյուրերը Նորին Սրբությանը մաղթեցին առողջություն եւ բարի ապաքինում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆ ՍՏԱՑԱՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 19-ին Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցելեց Հայաստանի Հանրապետության նոր վարչապետ Վազգեն Սարգսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայրապետական օրհնությունը տալով պրն. Սարգսյանին, հայտնեց Իր վստահությունը, որ նոր վարչապետը կարժեւորի խիստ պատասխանատու պաշտոնն իր նվիրվածությամբ ու փորձառությամբ:

«Խորը սիրով եւ սրտով բարձրագույն հաջողություն եմ ցանկանում: Քեզի պետք ունի հայրենիքը: Պետք է հարատեւել», - հայրապետական իր մաղթանքը հայտնեց Վեհափառ Հայրապետը:

Պրն. Սարգսյանը շնորհակալություն եւ առողջության բարի մաղթանքներ հայտնեց Վեհափառ Հայրապետին: